ԿԵՆԴԱՆԱԲՈՒՄՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

Հայաստանի գիւղատնտեսական մեծ խնդիրներից մէկը՝ կենդանաբուծութիւնն է։ Ընտանի կենդանին՝ բաց ի մսից և կաթից որոնք մարդիս անդադար կերակուրներից լաւ են, տալիս է հարստաբարեւստի նիւթեր, բուրդ և մորթ. մի ուրիշ նաև կարևոր արդիւնք՝ որն է աշխատանքը։

Կենդանաբուծութիւնը մի մեծ և բարդ գիտութիւն է որ ուսումնասիրում է կենդանիի բազմացումը և նրա զարգացումը, տալով նրան բոլոր առաւութեամբ այն պայմանները, որոնց պէտք ունի կենդանին՝ մեր ուզածները հայթայթելու։

1. Որդեծնութիւնը։ — Որպէս զի կենդանին զարգանայ, մենք պէտք ենք ուշ դարձնել նախ՝ նրա որդեծնութեան վրայ, որովհետև ըստ ժառանգական (hérédité) օրէնքներին, ծնողների մէջ առաջ եկած զարգացումները, ինչպէս նաև պակասութիւնները, կ՝արտայայտուին իրենց որդւոց մէջ։ Այդ պայմաններն են՝ նախ որոշել կենդանիին ցեղը, համեմատ այն պաշտօնին որուն ծառայեցնել կը կամենանք, ինչպէս օրինակի համար՝ մի կով որ տալիս է 25–30 լիտր կաթ օրական և ունի բոլոր կաթնաբեր և առողջական ցոյցերը, մենք նրան անջատում ենք և միաւորում այնպիսի ցուլի հետ, որը առաջ է եկել լաւ կաթնատու ծնողներից. մենք սկսում ենք փոքր առ փոքր ջնջել նախկին ցեղը և զարգացնում այս յատկութը։

2. Աստ կերակրումը։ — կենդանիի զարգացումի երկրորդ խնդիրն է առատ կերակրումը (alimentation intensive), դա ամէնից կարևորն է, որովհետև ըստ մեր ցանկութեան տալիս ենք կենդանիին այն նիւթերը որոնցով նա պատրաստում է կաթ, միս, կաշի, բուրդ և աշխատանք։

Կենդանի ասածը ուրիշ բան չէ, բայց եթէ մի գործիք, որին մենք տալիս ենք նախնական նիւթեր, և նա վերածում գործնականի։

Հայ գիւղացին շատ անգամ տրանջում է, թէ իր կովը մեռ ժամանակ դադարում է կաթ տալուց և կամ տալիս է 1 կամ 2 լիտր. ի հարկէ ամառը՝ կովը ստանում է ամէն օր մի որոշ չափով կանանչ խոտ և կամ արօտում նա ուտում և խմում է որչափ որ ուզում է, կանանչ խոտը որ կաթնարար կերակուրներից ամենից գլխաւորն է, իսկ ձմեռը գալով՝ մեր գիւղացին կերակրում է իր կովը միայն յարդով, որը ոչ մի կաթնային հեղանիւթ է պարունակում, և բացի դրանից մի ուրիշ վտանգ ևս՝ որ կովի ստամոքսը վարժուած լաւ կերակուրների՝ ստանում է յանկարծ չոր յարդ, դրանով թէ ստամոքսը և թէ կաթնային գեղձերը ենթակայ են լինում մի ծիւրութեան (atrophie), որը կորանցընել է տալիս կենդանիի լաւութիւնը և արժէքը։

Եթէ ներկայիս Եւրոպական մեթոդները տարածուած լինէին Հայաստանում, պիտի տեսնէինք որ երթալով կը կատարելագործուէր կենդանաբուծութիւնը։

Զուլեերիայում՝ Ֆրիբուրգեան սև-սպիտակ ցեղի մի կաթնատու կով ստանում է ամառը, օրական.

կանանչ խոտ	30–35	քիլ°
լաւ յարդ (ցորենի)	6	»
Բլիթ[1] բամբակի կճպած կորիզից	1½	»
Թեփ արմտեաց	6–8	»
Աղ	0,40	»

Իսկ ձմեռ ժամանակ, որպէս զի կերակուրների սկզբունքը հաւասարակշիռ մնայ, տալիս են.

Ճակնդեղ (կտտորած)	25–30	քիլ°
Չոր խոտ	5	»
Բլիթ, կտաւատի և բամբակի	1	»
Թեփ	6	»
Աղ	0,40	»
Ցորենի յարդ	6	»

1. Բլիթ ասում են՝ խոզը քամելից յետոյ, մնում է մի մնացորդ, որը փշրում են կամ ալում, խառնում թեփի կամ կտրած խոտի հետ և տալիս կենդանեաց։

© National Library of Armenia

Դրանով է որ այդ կովերը տալիս են 3000-ից մինչև 3600 լիտր կաթ տարեկան։

3. Մարզումն գործարանների (gymnastie fonctionaire) լինի ստամոքսի, լինի կաթնային գեղձերի և կամ արագութեան և ուժի վրայ։ Ինչպես մի կենդանի որ որոշուած է մի համար, օրինակ մսացու եզները, վարժեցնում են նրանց փոքր առ փոքր շատ ուտելու, և այսպէսով կենդանին շուտ է հասնում և շուտ մեծանում և լաւ գիրանում։ Նրա շնորհիւ է որ 14դդ դարում Անգլիայում մի մսացու եզ 4 տարեկան հասակում կշռում էր 200 քիլօ, այդ կշիռը հիմայ գրեթէ եռապատիկ և նոյն իսկ քառապատիկն է դարձել։

Շատ հետաքրքրական է ի նկատի առնել մկանունքների զարգացումն, անդամների, գլխի, գործող անդամների փոփոխութիւններն. կողերը երթալով կլորանում են, ազդրները զատում ընդարձակւում են, գլուխը փոքրանում և վիզը կարճանում մորթը փոխում է իր կարծրութիւնը և լինում աւելի բարակ, մազերը լինում աւելի նուրբ։

Մարզանքը կաթնային գեղձերի՝ շատ հետաքրքրական է, ինչպէս մի երինջ՝ որը ծգում է ծծել իր մօտի ընկերներից մարզական այդ գործումը և շարժումները զգոում են նոր ծիծը, նախ տալիս է նա մի դեղին ջուր, իսկ եթէ մենք շարունակենք և չանք ունենանք նրան կթելու, նա պիտի սկսի կամաց կամաց կաթ տալ, ի հարկէ միշտ ծծցնելից առաջ։ Հիմայ զարգացնելու և թէ շահի համար, երինջները յղացնել են տալիս 17-20 ամսական, փոխանակ երկու տարեկան հասակում, 18 ամսից առաջ եթէ նուիրենք մի երինջ ծննդեան, այդ մեզ փնաս է՝ որովհետև մինչև 18 ամսական նա դեռ մեծանում է։

Օրինակ առնենք իբր մարզական գործում, բնական հորդի ծծելը, որը մի քիչ ծծելից յետոյ, նա խփում է իր մօր ստինքին որ կաթը իջնէ. դրանից նաև սովորութիւն է դարձեալ մի քանի երկիրներում որ կթելից առաջ ծծում են փափուկ կերպով կովի ստինքները։ Դա եղած է Արզագ ցեղի ոչխարների վրայ, որով երթալով նա տուած է կրկինից աւելի. 1780 մի Արզագ ցեղի ոչխար տալիս էր տարեկան 6 քիլօ Ռոքֆօրի պանիր, իսկ ներկայումս նրանից ստանում են 35-40 քիլօ։

Շատ յաջողելի արդիւնքներ տուած է նաև կովն ստէպ կթելը։ Դա ի նկատի առնելու է որ կաթնային մարզական գործումը գրեթէ ոչինչ ազդեցութիւն չունի, եթէ մենք չենք գործում մի քաղցր և խոնաւ կլիմայում, ինչպէս օրինակ. հոլանդական կովերը, տեղափոխուած ի Սպանիա, դադարում են առատ կաթ տալուց, և տալիս են աւելի քիչ քան տեղաբնակները։

Ուժի և արագութեան մարզանքը շատ մեծ արդիւնք է ունեցած ձիի, եզի, էշի, ջորիի և նոյն իսկ շան վրայ։ Դա կատարուած է աւելի ձիի վրայ, որը կայանում է մի կարգ աստիճանաւոր կրթութեանց վրայ, բայց որպէս զի մենք հասնենք մեր նպատակին պէտք է.

1. Որ ենթական ստանայ ամեն անգամ այն նիւթերը որ պէտք ունի իր սպառածը լցնելու։

2. Եւ այն մասնորդները՝ որ տեղի ունին մկանունքի աշխատութիւններից, ոչնչանան ամենայն արագութեամբ արեան շարժումով։

Որեմն ուժի և աշխատանքի, ինչպէս նաև արագութեան մարզանքը՝ պէտք է ազդեցութիւն ունենայ մարսողութեան, շարժման, արեան շրջանի և շնչառութեան վրայ։

ՊԱՊԻԿ-ԼԵՒՈՆԻ

© National Library of Armenia